600.0067.03.03.21

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 մարտի 2021 թվականի №67Ա
քաղ. Երևան

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 5-ՐԴ ԹԱՂԱՄԱՍԻ 3-ՐԴ ՓՈՂՈՑԻ №1/6 ՏԱՆ ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՄԱՆ ՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) Արարատի մարզի Մասիս համայնքի 5-րդ թաղամասի 3-րդ փողոցի №1/6 տան (այսուհետ՝ առանձնատուն) սպառման համակարգի էլեկտրական ցանցին միացումն առանց միացման վճարի գանձման իրականացնելու վերաբերյալ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերություն ներկայացրած՝ քաղաքացի Աշխեն Ղազախյանի (այսուհետ՝ Դիմող անձ) 2020 թվականի հոկտեմբերի 29-ի դիմումը,

բ) Հայաստանի Հանրապետության սոցիալական աջակցության Մասիսի տարածքային գործակալության կողմից տրամադրված 2020 թվականի դեկտեմբերի 7-ի №4867 տեղեկանքը, ըստ որի՝ Դիմող անձը հաշվառված է ընտանիքների անապահովության գնահատման համակարգում, և նրա ընտանիքի անապահովության միավորը կազմում է 24.82,

գ) Դիմող անձի 2021 թվականի փետրվարի 25-ի և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության 2020 թվականի դեկտեմբերի 23-ի №ԻԳ4733 գրությունները, որոնց համաձայն վերջիններս չեն առարկում առանձնատան սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացումը սույն որոշմամբ սահմանված ընթացակարգով իրականացնելուն,

և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի №358Ն որոշմամբ հաստատված՝ էլեկտրական էներգիայի մատակարարման և

օգտագործման կանոնների 13.8 կետը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել, որ՝
   1) առանձնատան սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացվելու դեպքում միացումն իրականացվում է առանց միացման վճարի գանձման.
   2) Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը՝ չի թույլատրվում Դիմող անձից պահանջել կատարել վճարումներ, տրամադրել հատուցում, ներկայացնել տեղեկատվություն և փաստաթղթեր կամ նրան ծանրաբեռնել պարտավորություններով, եթե դրանք սահմանված չեն էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոններով, այլ նորմատիվ իրավական ակտերով, սույն որոշմամբ կամ էլեկտրամատակարարման պայմանագրով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Դիմող անձին և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
3 մարտի 2021 թ.